

## Վարչապետ Տիգրան Սարգսյանի շնորհավորական խոսքը շինարարի մասնագիտական տոնի առթիվ

Հարգելի գործընկերներ,

Հայաստանի Հանրապետության կառավարության անունից սրտանց շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի կապակցությամբ: Մա բացառիկ հնարավորություն է միմյանց հետ հանդիպելու և քննարկելու շինարարական ոլորտի խնդիրները, անցած ճանապարհը, ձեռքբերումները և այն նոր մարտահրավերները, որոնք կանգնած են շինարարական ոլորտի առջև, շինարարների առջև:

Գաղտնիք չէ, որ 2009թվականը լուրջ փորձության տարի էր առաջին հերթին շինարարության ոլորտի համար: Մենք ունեցանք կապիտալ ներդրումների էական նվազում, և առաջին հերթին շինարարության ոլորտում, որի արդյունքը մենք արձանագրեցինք ամբողջ տնտեսական համակարգի վրա: 2010 թ. առաջին կիսամյակի միտումները ցույց են տալիս, որ ոլորտը փուլ առ փուլ դուրս է գալիս ճգնաժամային իրավիճակից, և դրան էապես նպաստում են նաև այն մեծածավալ ծրագրերը, որ այսօր ֆինանսավորվում են պետական բյուջեից:

Այս աշխատանքները շարունակվելու են, և չափազանց կարևոր է, որ քաղաքաշինության նախարարության նոր նախաձեռնությունները ավելի բազմազան են դարձնում այն գործառույթները, որով զբաղվում են այսօր շինարարները: Ցանկանում եմ հիշատակել այն պիլոտային նախագիծը, որ մենք իրականացնում ենք Գառնի-Գեղարդ ճանապարհային հատվածում՝ նպատակ ունենալով ձևավորել մի նոր տուրիստական կենտրոն: Նմանատիպ նախագծեր իրականացվելու են նաև ՀՀ ողջ տարածքով մեկ՝ նպատակ ունենալով մեծացնել ուշադրությունը մասնավոր ներդրողների, շինարարական նոր նախագծերի նկատմամբ, որոնք պետք է համահունչ լինեն մեր երկրի սոցիալ-տնտեսական զարգացումներին: Այդ առումով չափազանց կարևոր խնդիր է արդիականացնել շինարարական ոլորտը: Մենք ունենք լուրջ պատմական ժառանգություն, որով հպարտանում ենք: Եվ այսօր էլ մենք ուզում ենք այնպիսի նոր խոսք ասել շինարարության ոլորտում, որով հպարտանալու է նաև երիտասարդ սերունդը: Եվ այդ առումով համոզված եմ, որ Հայաստանի Հանրապետությունում կա բավարար ներուժ, կարողություններ, որպեսզի միասին կերտենք հիասքանչ հանրապետություն:

Հարգելի գործընկերներ, ևս մեկ անգամ ցանկանում եմ կարևորել ձեր դերակատարությունը մեր ապագայի կերտման գործում: Սրտանց շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի կապակցությամբ: